Գերմանիայի
Դաշնային Հանրապետության
դեսպանություն
Երևան

ՀՈՒՇԱԹԵՐԹԻԿ
ԱՄՈՒՍՆՈՒ/ԿՆՈՋ ՄՈՏ ՏԵՂԱՓՈԽՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԱՀԱՆՋՎՈՂ ԳԵՐՄԱՆԵՐԵՆԻ ՀԻՄՆԱՅԻՆ (տարրական) ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Կացության մասին օրենքի հիմնական փոփոխությունից հետո այն ամուսինները, որոնք պատրաստվում են տեղափոխվել Գերմանիա, պետք է իրենց հայրենիքում արդեն իսկ վիզայի համար դիմելիս հաստատեն, որ ունեն գերմաներենի հիմնային գիտելիքներ: Պատճառը. Գերմանիայում նրանք սկզբից ևեթ պետք է կարողանան գոնե պարզագույն մակարդակով շփվել գերմաներենով և մասնակից լինել հասարակական կյանքին: Այդպես ավելի դյուրին կդառնա մեկնող ամուսնու/կնոջ ինտեգրացիան գերմանական հասարակությանը: Կմեծանան մեկնարկային հնարավորութունները:

Գերմաներենի հիմնային իմացության վկայականը ներկայացվում է վիզայի փաստաթղթերի հետ միաժամանակ: Գերմաներենի հիմնային գիտելիք է համարվում Եվրախորհրդի «Լեզուների եվրոպական ընդհանուր չափորոշիչ» A1 մակարդակի իմացությունը: Այս նորույթը հիմնված է «Եվրամիության կացության և ապաստանի իրավունքի չափանիշների փոփոխության մասին օրենքի» վրա:

Վիզայի համար դիմելիս որպես լեզվի իմացության ապացույց հարկ է ներկայացնել A1 մակարդակի վկայական, որը տրվում է Association of Language Testers In Europe–ի (ALTE) ստանդարտներին համապատասխան լիցենզավորված քննական հաստատության կողմից, որն ունի համապատասխան լիազոր ներկայացուցիչ: Հայաստանում վկայական կարելի է ստանալ **Երևանում Գերմաներենի ուսուցման կենտրոնից և Վ.Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանից,** որոնք կանոնավորապես անցկացնում են A1- քննություն:

Քննության համար գրանցվելու, լեզվի դասընթացներին մասնակցելու և հատուկ նախապատրաստական կուրսեր անցնելու համար կարող եք դիմել

1. Երևանում Գերմաներենի ուսուցման կենտրոն՝ (SLZ),
   Գյոթեի ինստիտուտի գործընկեր
   Միհեր Մկրտչյան 1
   0010 Երևան,
   հեռ. +374 (0)60 54 22 10, +374 (0)93 52 83 07,
   էլ.փոստ. info@slz-Jerewan.am
   ինտ.էջ՝ https://slz-jerewan.am/de

2. Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան
   Թումանյան փողոց 42
   0002 Երևան
   հեռ. 00374 10522020-296
   էլ.փոստ. osterreichbibliothek.jerewan@gmail.com
   ինտ.էջ՝ https://brusov.am/

Լեզվի իմացությունը հաստատող վկայականներից է նաև

Այս հուշաթերթիկի բոլոր տվյալները հիմնված են այն գրելու պահին դեսպանության ունեցած տեղեկությունների և վերլուծությունների վրա, ուստի դեսպանությունը չի կարող երաշխավորել հուշաթերթիկի լիարժեքությունն ու ճշգրտությունը հատկապես ընթացիկ փոփոխությունների պատճառով:

- telc GmbH-ի՝ Գերմանական Volkshochschule-ի դուստր ընկերության „Start Deutsch 1“ սերտիֆիկատը (The European Language Certificate), որը տրվում է Գերմանիայում՝ Volkshochschule-ների կողմից, ինչպես
- TestDaF ինստիտուտի՝ Հագենի հեռակա համալսարանի և Բոխումի Ռուր-Համալսարանի ինստիտուտների „TestDaF“ սերտիֆիկատը, որը կարելի է ստանալ միայն B2 մակարդակի քննություն հանձնելու դեպքում:
- ECL- սերտիֆիկատը (European Consortium for the Certificate of Attainment in Modern Languages).

Ուշադրություն. Այլ հաստատությունների կողմից տրված լեզվի վկայականները չեն ճանաչվում:

Լեզվի հիմնային գիտելիքների մասին վկայականի պահանջը չի գործում օրենքով սահմանված հետևյալ բացառությունների հիմքով:
ա) Բացառություններ, որոնք պայմանավորված են անձի կարողություններով.

- բացառություններ, որոնք հիմնավորվում են անձի, դիմումատուի՝ գերմաներենի ակնհայտ գիտելիքներով (վիզայի բաժնի պատուհանի մոտ դիմումը հանձնելիս հաստատվում է դիմումատուի՝ գերմաներենի անվիճելի իմացությունը)

- Երբ օտարերկրացու առջև ինտեգրվելու առանձնահատուկ պահանջ չի դրվում. որպես կանոն, սա կիրառվում է այն դեպքում, երբ Դուք, օրինակ, ունեք բուհական ավարտական վկայական կամ համապատասխան մասնագիտական որակավորում, կամ այնպիսի աշխատանք եք կատարում, որը, որպես կանոն, նույնպիսի որակավորում է ենթադրում, և ողջամիտ ժամկետում համապատասխան աշխատանք կգտնեք Գերմանիայում և առանց պետական աջակցության կկարողանաք ինտեգրվել Գերմանիայի տնտեսական, հասարակական և մշակութային կյանքին: Այս երեք նախապայմանները (որակավորում, աշխատանք գտնելու դրական հեռանկար, ինտեգրվելու դրական հեռանկար) պետք է լիովին առկա լինեն: Միայն բուհի ավարտական վկայականը ներկայացնելը, առանց մյուս նախապայմանների առկայության, բավարար չէ հաստատելու համար, որ Ձեր առջև ինտեգրվելու առանձնահատուկ պահանջ չի դրվում: Աշխատանք գտնելու դրական հեռանկարը ենթադրում է, որ օտարերկրացին իր լեզվի իմացության շնորհիվ ողջամիտ ժամկետում Գերմանիայի տարածքում իր որակավորմանը համապատասխան թույլատրելի աշխատանք կգտնի: Այսպիսով՝ դիտարկվել կարող են միայն այն ավարտական վկայականներն ու որակավորումները, որոնք ամենայն հավանականությամբ հնարավորություն կտան օտարերկրացուն իր որակավորմանը համապատասխան աշխատանքի անցնել նաև Գերմանիայում: Բացառություններ կարող են արվել, ըստ էության, միայն այն աշխատանքների պարագայում, որոնք ներառում են նաև գործունեություն օտար լեզուներով:

- երբ միայն մեկանգամյա՝ <u>ժամանակավոր</u> կացություն է նախատեսված Գերմանիայում,

- Գերմանիա կրկին վերադառնալու դեպքում, եթե դիմումատուն արդեն մեկ անգամ Կացության մասին օրենքի հիման վրա տրված երկարաժամկետ կացության թույլտվությամբ եղել է Գերմանիայում,

- Եթե Դուք մարմնական, մտավոր կամ հոգեկան հիվանդության կամ հաշմանդամության պատճառով ի վիճակի չեք գերմաներենի նախնական իմացության վկայական ձեռք բերել, ապա դիմումին կցեք համապատասխան տեղեկանք՝ գերմաներեն թարգմանությամբ: Անհրաժեշտության դեպքում պետք է ներկայանալ դեսպանության տարածաշրջանային բժշկին: Ոչ տառաճանաչ լինելը, առաջացած տարիքը, հղիությունը, երեխայի խնամքը, որը հնարավոր է կազմակերպել, և լեզվի դպրոցից որոշակի տարածական հեռավորությունը, ընդհանուր առմամբ, ինքնին չեն հիմնավորում գերմաներեն սովորելու անհնարինությունը:

բ) բացառություններ, որոնք պայմանավորված են Գերմանիայում բնակվող առնչյալ անձով.

- եթե Գերմանիայում ապրող ամուսինը ունի Կացության հրամանի 41-րդ հոդվածում նշված երկրներից մեկի քաղաքացիություն կամ ազատ տեղաշարժի իրավունք Գերմանիայում, այսինքն՝ ԵՄ որևէ անդամ պետության (բացի Գերմանիայից) քաղաքացի է կամ EWR պետություններից մեկի՝ Նորվեգիայի, Իսլանդիայի, Լիխթենշթայնի կամ Շվեյցարիայի քաղաքացի է,

- Ձեր ամուսինը ունի կամ մոտ ժամանակներս կստանա կացության թույլտվություն (Aufenthaltserlaubnis) որպես

- կապույտ քարտ ունեցող (§ 18b Abs. 2 AufenthG),
- մասնագիտական կրթությամբ մասնագետ (§ 18a AufenthG)
- բուհական կրթությամբ մասնագետ (§ 18b Abs. 1 AufenthG)
- մասնագետներին տրվող բնակության իրավունք (Niederlassungserlaubnis) (§ 18c Abs. 3 AufenthG)
- ղեկավար անձ կամ առաջատար մասնագետ (§19c Abs. 1 AufenthG i.V.m. § 3 Nr. 1 und 3 BeschV)
- գիտնական, հրավիրված գիտնական, հրավիրված գիտնականի հետազոտական թիմում ընդգրկված ինժեներ կամ տեխնիկ, ուսուցիչ (§19c Abs. 1 AufenthG i.V.m. § 5 BeschV)
- SS մասնագետ (§19c Abs. 2 AufenthG i.V.m. § 6 BeschV)
- ICT քարտ ունեցող (§ 19 AufenthG),
- հետազոտող գիտնական (§§ 18d, 18f AufenthG),
- ընկերության հիմնադիր (§ 21 AufenthG),
- ապաստանի իրավունք ունեցող (§ 25 Abs. 1 bzw. § 26 Abs. 3 AufenthG),
- փախստականի կարգավիճակ ունեցող (§ 25 Abs. 2 bzw. § 26 Abs. 3 AufenthG),
- ԵՄ այլ երկրներից երկարաժամկետ կացության իրավունք ունեցող (§ 38a AufenthG)
- կացության իրավունք ունեցող՝ ըստ §19c Abs. 4 S.1 Aufenth

- Դուք որպես խնամակալության իրավունք ունեցող ծնող տեղափոխվում եք Ձեր գերմանացի անչափահաս երեխայի մոտ կամ նրա հետ միասին՝ Գերմանիա, կամ հղի եք երեխայով, որին ծնվելիս պետք է տրվի Գերմանիայի քաղաքացիություն:

Բացառություն է արվում նաև այն առանձին դեպքերում, երբ առանձնահատուկ հանգամանքներում ամուսնու/կնոջ համար դժվար կամ անհնար է մեկնումից առաջ քայլեր ձեռնարկել գերմաներենի պարզագույն գիտելիքներ ձեռք բերելու ուղղությամբ:

Սրանք հիմնականում այն դեպքերն են, երբ տվյալ երկրում տևական ժամանակ լեզվի դասընթացներ չեն կազմակերպվում, կամ այդ դասընթացներին հաճախելը կապված է մեծ ռիսկերի հետ, իսկ լեզու սովորելու և գիտելիքների ստուգման արդյունավետ այլընտրանքային միջոցները (օրինակ՝ գրքեր, համացանց) բացակայում են: Սա, սակայն, Հայաստանին չի վերաբերում:

Եթե կարծում եք, որ վերոնշյալ բացառություններից որևէ մեկը համապատասխանում է Ձեր հանգամանքներին, ապա դիմելիս պետք է ներկայացնեք հիմքերը:

Եթե վստահ չեք՝ արդյոք բացառությունը վերաբերում է Ձեզ, թե ոչ, կամ թե ինչ ապացույցներ է հարկավոր ներկայացնել, կարող եք նկարագրել Ձեր հանգամանքները և հարցում անել հյուպատոսական բաժնի այս կոնտակտային ձևաթղթով:

Այս հուշաթերթիկի բոլոր տվյալները հիմնված են այն գրելու պահին դեսպանության ունեցած տեղեկությունների և վերլուծությունների վրա, ուստի դեսպանությունը չի կարող երաշխավորել հուշաթերթիկի լիարժեքությունն ու ճշգրտությունը հատկապես ընթացիկ փոփոխությունների պատճառով:

Կոնտակտային ընթացիկ տվյալները, ինչպես նաև հեռախոսազանգերի ժամանակացույցը կարող եք գտնել կայքում.
https://eriwan.diplo.de/